

ԱՆՆԱԽԸՆԹԱՑ ԵՐԵՎՈՒՅԹ

Սյունյաց թեմը աղոթքի և խոկումի երեք օրեր ապրեց: Հայ Եկեղեցու մեկ արքեպիսկոպոս և երեք թեմական առաջնորդներ, շրջապատված վարդապետների հույլով ու քահանա հայրերով, ճամփա ելան Մայր Աթոռ Ս. Էջմիածնից դեպի Սյունյաց լեռնաշխարհ: Նպատակն էր ուխտի գնալ Տաթևի վանք, տոնելու համար Հովհան Օձնեցի Կաթողիկոսի, Հովհան Որոտնեցի և Գրիգոր Տաթևացի եռամեծար վարդապետների տոնը: Նպատակն էր նաև կազմակերպել մի գիտաժողով՝ նյութ ունենալով ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՆՔԸ:

Եկեղեցականների խումբը նախ կանգ առավ Եղեգնաձորի Նորավանք հռչակավոր վանքում, ուր ամփոփված են Սյունյաց թեմի մետրոպոլիտ և Սյունյաց աշխարհի մեծ պատմաբան Ստեփաննոս Օրբելյանի աճյունները: Եկեղեցական թափորը բարձրացավ դեպի բլուրի փոքրիկ բարձունքը, ուր տիրական իրենց գեղեցկությամբ մինչև այսօր կանգուն են երեք եկեղեցիները: Գլխավոր եկեղեցու բեմի դիմաց կատարվեց պաշտամունք, որն սկսվեց սաղմոսերգուի հայտարարությամբ. «Ուրախ եղէ ես ոյք ասէին ցիս ի տուն Տեառն երթիցուք մեք»: Ուրախությանը խառնած իրենց հուզումը, Եկեղեցու Վարդապետները փառք տվին Աստուծո, որ տասնամյակների լռությունից հետո եկեղեցու քարերը արձագանքում էին աղոթք ու փառաբանություն առ Աստված:

Պրոֆ. Գրիգոր Գրիգորյանը՝ Սյունյաց եկեղեցիների վիմագիր արձանագրությունները հավաքող և հրատարակող պատմագետը, վերակոչեց հոյակապ կոթողների պատմությունը և մեկ անգամ ևս կարդաց դամբարանների արձանագրությունները:

«Բուրթելաշէն» կոչված եռահարկ եկեղեցում, որը համարվում է հայ ճարտարապետության գլուխգործոցներից մեկը, կատարվեց հոգեհանգիստյան հատուկ արարողություն: Տպավորիչ էր հատկապես հոգեհանգստյան արարողությանը մասնակցող մի խումբ դպրոցականների ներկայությունը:

Եղեգնաձորում հյուրասիրվելուց հետո, ուխտավոր խումբը շարունակեց ՝ի՛ր ճանապարհը դեպի Սիսիան: Ժողովուրդն արդեն հավաքվել էր յոթերորդ դարում կառուցված եկեղեցու դիմաց, երբ թափորը բարձրացավ դեպի Տաճար: Կատարվեց հանգստյան ժամերգություն, որի ավարտին քարոզեց Շիրակի թեմի առաջնորդ գերշ. Տ. Գրիգորիս եպիսկոպոսը: Պերճախոս իր վայելքով, նա ոգեկոչեց երեք մեծ Սուրբերի կյանքը, Հովհան Օձնեցին՝ իբրև ութերորդ դարի աստվածաբան և կանոնադիր Կաթողիկոս, Հովհան Որոտնեցի և Գրիգոր Տաթևացի եռամեծ վարդապետները, որոնք տասն-



Նորավանքի Ս. Աստվածածին եկեղեցու առջև

չորսերորդ դարին վերատին հիմնավորեցին մեր Եկեղեցու դավանանքը և պաշտպանեցին Աստուծո հոտը օտարադավան քարոզությունների դեմ:

Եկեղեցականների և գիտնականների խումբը այնուհետև ուղղվեց դեպի Գորիս, ուր ընդունվեց տեղի ղեկավարության կողմից:

Շաբաթ առավոտ, մարտի 2-ին, Գորիսի թատրոնի շենքի մեծ սրահի մեջ տեղի ունեցավ գիտաժողովը: Այնուհետև թեմի առաջնորդ գերշ. Տ. Ասողիկ եպիսկոպոսը բացման խոսքով ողջունեց ժողովի մասնակիցներին ու ներկա հասարակությանը, ասելով. «Թող այս գիտաժողովը դառնա օրինակ հետ այսու կազմակերպվելիք նման հավաքույթների: Թող մեր ուխտն ու խորհուրդները հաճելի լինեն Տիրոջը, որպես բանավոր ընծա, իսկ յոթնալույս վարդապետի՝ եռամեծար Գրիգոր Տաթևացու շնորհները առատապես տարածվեն բոլորիս վրա»:

Գուգարաց թեմի առաջնորդ գերշ. Տ. Արսեն եպիսկոպոսը կարդաց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի նամակը՝ ուղղված ուխտագնացությունը և գիտաժողովը հրավիրող գերշ. Տ. Ասողիկ եպիսկոպոսին.

«Սիրելի Սրբազան,

Գոհունակ սրտով ստացանք Ձեր 14 փետրվար թվակիր գրությունը ի մասին Ուխտագնացության ի Տաթև, մարտ 2-ին, շաբաթ օր, երբ ծրագրած եք կազմակերպել այդ առթիվ մի գիտաժողով «Հայկական Վանքը» թեմայով, որին պիտի մասնակցեն կարճ զեկուցումներով Մայր Աթոռիս շուրջ տասը երիտասարդ միաբանները:

Սիրով ողջունում ենք Ձեր նախաձեռնությունը և մաղթում ենք, որ Ձեր այս առաջին գիտաժողովը Ձեր նախատեսած նպատակին ծառայի և մի սկզբնավորություն հանդիսանա ապագա ավելի լայն ծրագիրներ ընդգրկող գիտաժողովների:

Ձեզ և ուխտագնացության մասնակցող բոլոր մեր միաբաններին և հրավիրյալ գիտաշխատողներին հղում ենք Մեր ջերմագին գնահատանքը և օրհնությունը.

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Վեհափառ Հայրապետի ողջույնի գիրը ընդունվեց ծափերով, որին հաջորդեց Գորիսի քաղաքապետ տիար Համլետ Մկրտչյանի բարիգալստյան խոսքը: Այնուհետև խոսք առավ գերշ. Տ. Ծահե արքեպիսկոպոսը, որը բացատրեց գիտաժողովի բնույթը և խորհրդակցությունների ընթացքը: Նա հոգշ. Տ. Միքայել վարդապետին հրավիրեց կատարելու ատենադպիրի պաշտոնը:

Գերշ. ատենապետը խոսքը տվեց պատմական գիտությունների դոկտոր Գրիգոր Գրիգորյանին, որ նկարագրի Սյունյաց պատմական վանքերը: Հարգելի գիտնականը խոսեց Սյունյաց նահանգի պատմական սահմանների մասին և ներկայացրեց Տաթևի վանքը, Վահանավանքը, Որոտնավանքը և Նորավանքը: Նա մեջբերումներ կատարեց պատմական արձանագրություններից, որոնք պահված են եկեղեցիների պատերի վրա:

Հաջորդ խոսողը եղավ հոգշ. Տ. Շնորհք վարդապետը, նյութ ունենալով «Վանքը որպես ուսումնարան» թեման: Նա հատկապես ծանրացավ Հառիճա վանքի մեջ քահանաների պատրաստության ծրագրի վրա և առաջարկեց մի նոր գաղափար՝ վանքերի շուրջ ստեղծել քրիստոնեական համայնքներ և տնտեսություններ: Շնորհալի վարդապետը առաջարկեց նման տիպի հա-

մայնքի ստեղծումի ծրագիրը Կեչառիսի վանքի շուրջ, որին նվիրվելու իր պատրաստակամությունը հայտնեց: Բանախոսը առաջարկեց նաև մի քանի վանքերի մեջ ստեղծել եռամյա ճեմարանական դասընթացներ, ինչպես կան արդեն Հաղբատում և Սևանա վանքում, իսկ Մայր Աթոռի հոգևոր ճեմարանը վերածել բարձրագույն ուսումնարանի, ուր գան վանքերի մեջ եռամյա դասընթացք ավարտող ուսանողները, ստանալու համար բարձրագույն կրթություն:

Երրորդ զեկուցումը ներկայացրեց արժ. Տ. Եզնիկ քահանան, նյութ ունենալով «Վանքը որպես գիտության և մշակույթի կենտրոն» թեման: Ներկայացնելուց հետո հայկական վանքերի նպաստը գիտության և մշակույթի զարգացման գործում, Հաղբատի վանքի վանահայրը եզրակացրեց՝ առաջարկելով չորս գործնական քայլեր վաղվա հայ վանքը վերականգնելու վանական շենքերի շինությունը, ապահովել դրանք նյութական միջոցներով, պատրաստված եկեղեցականներով և աշխարհական գիտնականներով, օժտել դրանք և հստակ բանաձևումով որոշել յուրաքանչյուր վանքի գործունեության շրջանակը, հայ վանքին տալու համար անցյալի իր փառքը:

Ժողովի երկրորդ նիստի ատենապետությունը վարեց գերշ. Տ. Արսեն եպիսկոպոսը: Առաջին զեկուցումը կատարեց Մատենադարանի գիտական քարտուղար, բանասիրական գիտությունների թեկնածու Արմեն Տեր-Ստեփանյանը, նյութ ունենալով «Վանքը հայ մատենագրության մեջ» թեման: Նա մեջբերումներ կատարեց հին մատենագրությունից, Սահակադուխտի տաղերից, «Պատմագիրք Սյունյաց» ժողովածուից, վիմագիր արձանագրություններից և գրական այլ գործերից, որոնց մեջ գովաբանվում է վանքը, հատկապես իբրև լույսի խորհրդանիշ:

Հաջորդ խոսքը տրվեց հոգշ. Տ. Նաթան վարդապետին, որ ներկայացրեց մի լուրջ ուսումնասիրություն «Վանականության սկզբնավորությունը» նյութի մասին: Նա հատկապես շեշտեց մենաստանների և անապատների ծաղկումը Եգիպտոսի մեջ և նկարագրեց վանական կյանքի տարածումը քրիստոնեության առաջին դարերին:

Հաջորդ խոսողը եղավ գերշ. Տ. Շահե արքեպիսկոպոսը, որ ներկայացրեց «Վանքը իբրև ուխտավայր» թեման: Նա խոսեց վայրի, կառույցի և մարդու սրբության մասին, հատկանշելով վանքը իբրև ժամադրավայր Աստուծո և ուխտավորի, որ ձգտում է լինել իբրև Աստուծո տաճար:

Ընդմիջումից հետո բացվեց երրորդ նիստը գերշ. Տ. Գրիգորիս եպիսկոպոսի ատենապետությամբ: Խոսք առնելու հրավիրվեց գերշ. Տ. Արսեն եպիսկոպոսը, որ ընտրել էր «Վանքը և արդիականությունը» թեման: Գուգարքի սրբազան առաջնորդը պատմական մի ակնարկ կատարելուց հետո իր թեմի նշանավոր վանքերի մասին՝ Հաղբատի, Սանահինի, Օձունի և Ախթալայի, ներկայացրեց վանական կյանքի արդի պահանջները:

Հաջորդ զեկուցումը կատարեց Մատենադարանի ավագ գիտաշխատող Արտաշես Մաթևոսյանը, նյութ ունենալով «Վանքը որպես գրչության օջախ» թեման: Նա խոսեց հատկապես Սյունյաց վանքերի մասին իբրև գրչության կենտրոններ, որոնցից մեզ են հասել թանկագին ձեռագրեր՝ ինչպես Էջմիածնի Ավետարանը, Վեհափառի Ավետարանը, Վեհամոր Ավետարանը, հնագույնները Ավետարանի ձեռագրերից: Նա վերջացրեց իր շատ հետաքրքրքական զեկույցը՝ խոսելով Տաթևի և Արատեսի ձեռագրերի մասին:

Հոգշ. Տ. Աբել վարդապետը ներկայացրեց խնամքով պատրաստված մի ուսումնասիրություն՝ «Վանքը որպես կուսանոց» նյութի շուրջ: Գիտնա-

կան դասախոսը հիշատակեց բոլոր պատմական վկայությունները սարկավագունիների գոյության մասին և հիմնավորեց այն փաստը, թե Հայ Եկեղեցու ավանդություններից մեկն է չզրկել կինը Ս. Խորանի սպասարկությունից: Անդրադառնալով կուսանոցների մասին, վարդապետը հանգամանորեն նկարագրեց դրանց զարգացումը և հետզհետե անհետացումը:

Գիտաժողովի չորրորդ նիստը ատենապետեց Քրիստոնեական Քարոզչության Կենտրոնի տեսուչ հոգշ. Տ. Աբել վարդապետը: Խոսելու առաջին հրավիրվողը եղավ հոգշ. Տ. Սեպուհ ծ. վարդապետը, նյութ ունենալով «Վանքը և իր վերածնունդը» թեման: Պատմական կարճ ակնարկից հետո հոգևոր հայրը բանաձևեց հայ վանքի վերակենդանացման նախադրյալները, շեշտելով կրոնական կյանքը ծաղկեցնելու անհրաժեշտությունը:

Հաջորդ խոսողը՝ հոգշ. Տ. Սերովբե վարդապետը, ներկայացրեց «Վանքը որպես երաժշտանոց» թեման: Նա ներկայացրեց վանքերի մեջ զարգացած արարողությունների կարգը, դրանց ընթացքին երգված շարականների ստեղծումը և մանավանդ երաժշտության ուսուցումը: Խիտ և լավ ուսումնասիրված կերպով նա խոսեց վանքերի մեջ մասնագիտացող երաժիշտների ստեղծագործությունների մասին:

Արժանապատիվ Տ. Արտակ քահանան ներկայացրեց «Պաշտամունքը վանքի մեջ» նյութը, հատկապես խոսելով ծիսական կարգի, «Մաշտոցի» և «Տոնացույցի» մասին: Տեր հայրը գործնական առաջարկություններ ներկայացրեց ավելի հայացնելու Տոնացույցը և բարեփոխելու խորհրդակատարությունները:

Վերջին նիստի վերջին դասախոսը՝ հոգշ. Տ. Միքայել վարդապետը, ներկայացրեց «Վանքը որպես մենաստան» թեման: Ամփոփ ակնարկից հետո մենաստանների զարգացման մասին, նա բնութագրեց վանական կյանքի էությունը, որպէս հոգևոր կյանքի բարձրագույն աստիճան, որ վերացնում է մարդը աշխարհի մտահոգություններից, տանելու համար նրան ներհայեցողական ինքնագիտակցության ոլորտները: Հոգևոր հայրը եզրափակեց իր խոսքը՝ մաղթելով, որ նոր վերաբացվող վանքերը առիթ տան վանական նոր միաբանությունների երևումին:

Ուշագրավ էր հատկապես ունկնդիրների բազմությունը, սկսյալ երկրորդական վարժարանների աշակերտությունից մինչև պոլիտեխնիկի գիտնականները: Բոլորն էլ հանդես էին գալիս խնամված հարցադրումներով ու մտքերի փոխանակությամբ: Թե՛ մեծերի և թե՛ փոքրերի հետաքրքրությունները կրոնի, Եկեղեցու, վանքի և առհասարակ հոգևոր կյանքի մասին արտահայտում էին ծարավը՝ վերադառնալու աղբյուրին, որից հայ հոգին ըմպեց միշտ կենսագործող ջուրը՝ աստվածային խոսքը:

Ինչպես ընդգծեց Սյունյաց թեմի առաջնորդ գերշ. Տ. Ասողիկ եպիսկոպոսը, Սյունյաց թեմի պատմության մեջ արձանագրվեց աննախընթաց մի երևույթ:

Մարտի 3-ին, կիրակի օրը, Գորիսը ապիտակել էր ձյունի շղարշի ներքո: Եկեղեցականների խումբը որոշել էր կատարել իր ուխտագնացությունը ի Տաթև, հակառակ աննպաստ օդին: Ինքնաշարժերի թափորը սկսեց բարձրանալ Սյունյաց խրոխտ լեռներն ի վեր, կտրելով մշուշոտ ճանապարհը և ակոսելով ձյունի շերտը: Առաջին կայանը եղավ Խրիմյան Կաթողիկոսի հիշատակին կանգնեցված սյունի առջև: Հայոց Հայրիկի հիշատակը օրհնելուց հետո, թափորը շարունակեց իր ճանապարհը դեպի Տաթևի վանք: Այստեղ ավելի թանձր էր ձյունը, որ անընդհատ շարունակվում էր տեղալ:

Սակայն այն բնավ արգելք չէր, որ Տաթևի գյուղի ժողովուրդը քայլի դեպի իր ուխտատեղին: Եկեղեցական հայրերի և ժողովրդի հետզհետե աճող խումբը շարժվեց դեպի Ս. Պետրոսի և Ս. Պողոսի տաճարը: Եկեղեցականները թափոր կազմած երգեցին «Հրաշափառը» և եկան-շարվեցին դասի մեջ: Եկեղեցին լեցուն էր բարեպաշտներով: Սկսվեց եկեղեցական արարողությունը: Հնչեցին «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ», «Հայր մեր», «Տէր ողորմեա» հոգևոր երգերը: Եկեղեցու մեջ ստեղծվեց պաշտամունքի մի խորունկ պահ: Վերստին կենդանացավ հույսը, որ այլևս ոչ մեկ ուժ չպիտի լռեցնի հայ աղոթքի ձայնը այստեղ:

Սյունյաց թեմի առաջնորդը բարի գալուստի բառերով հրավիրեց գերշ. Տ. Շահե արքեպիսկոպոսին՝ տալու իր պատգամը: Սրբազան հայրը իր հոգեշունչ քարոզով խրախուսեց ժողովրդին հպարտանալու միայն իր հավատքի զորությամբ, որ կարող է հաղթահարել ամեն դժվարություն և աղետ ու վերականգնել ամեն անկում: Ոգեկոչելով Արևելյան վարդապետների պայքարը հանուն հայ հավատքի պահպանման, նա կոչ արեց նորոգելու անցյալի հետ կապող մեր անքակտելի ուխտը:

Եկեղեցական դասը, շրջապատված ժողովրդի հոծ բազմությամբ, ուղղվեց դեպի մեծ Վարդապետի դամբարան, երկրպագեց և սկսեց հոգեհանգստյան արարողությունը՝ հիշելու համար բոլոր առաջնորդներին ու վարդապետներին, որոնք «ուսուցին զբանն ճշմարտութեան»:

Ուխտավորները վերադարձան Գորիս, ուր իրենց մի նոր հաճելի անակնկալ էր սպասում: Քաղաքի ղեկավարները հղացել էին մի գեղեցիկ ծրագիր՝ Գորիսի եկեղեցու փողոցը վերանվանել Ս. Գրիգոր Տաթևացու անվամբ և նույն փողոցի ծայրում կանգնեցնել եռամեծար Վարդապետի արձանը: Հոգևորականաց դասը, քաղաքապետը և իր գործակիցները կատարեցին հիմնաքարի հանդիսավոր զետեղումը և օրհնությունը:

Հուզիչ և ոգևորիչ էր այցը երկրաշարժի աղետի զոհերին նվիրված հուշարձանին, որի վիրավոր կամարի տակ կատարվեց հոգեհանգստյան աղոթք:

Հաջորդ և վերջին հանգրվանը եղավ Գորիսի Ս. Գրիգոր Տաթևացու անվան կիրակնօրյա դպրոցը: Քաղաքի գեղեցկագույն շենքի մեջ տեղավորված դպրոցը արդեն իսկ մեծ հաջողություններ էր արձանագրել իր երկու հարյուրից ավելի աշակերտներով:

Այսպիսով ավարտվեց ուխտագնացությունը, որ Հայ Եկեղեցու ներկայությունը և Աստուծո խոսքը ամրապնդեց Սյունյաց աշխարհի սրտի մեջ: Մայր Աթոռի միաբանների խումբը Ս. Գրիգոր Լուսավորչի կանթեղի լույսը տարավ Սյունյաց լեռնաշխարհի երկնքում վառելու համար: